

ԲԵԼՏԻԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Պատմական դառը հանգամանքների բերումով աշխարհի տարբեր ծագերում հայտնված հայ ժողովրդի խլյակները դրսևորեցին զարմանալի կենսունակություն և հարատևելու անօրինակ կամք: Ամենուրեք կառուցում էին եկեղեցիներ, ստեղծում կրթական-մշակութային հաստատություններ, հասարակական կազմակերպություններ, որոնք կոչված էին սատար լինելու ազգային ինքնության և դիմագծի պահպանությանը: Պատմական այս էջերը հայ ժողովրդի պատմության անքակտելի մասն են և ամբողջացնում են մեր պատկերացումները հայրենիքից հեռու ապրող հայության մասին:

Ըստ տեղեկությունների, հայերը Մոլդավիա են գաղթել Ղրիմից և հաստատվել են այնտեղ դեռևս միջնադարում:

1401 թ. Սուչավայում հիմնվում է հայկական եպիսկոպոսություն, իսկ 1812 թ. երբ Բեսարաբիան անցնում է Ռուսաստանին, Քիշնևում, ուր արդեն կային հայկական երկու եկեղեցիներ, հաստատվում է Բեսարաբիայի հայոց հոգևոր առաջնորդությունը: Թեմակալ առաջնորդներից վերջինը Ներսես արքեպիսկոպոս Խուդավերդյանն էր, որն ազգանվեր գործունեություն էր ծավալում Բեսարաբիայի մահաճում, նպաստում հայաշատ քաղաքներում հայկական եկեղեցիներ կառուցելուն: Նահանգի հյուսիսային մասում, որտեղ մեծ թվով հայեր էին բնակվում, չունեին իրենց ազգային եկեղեցին, և շատերն անգամ պատկերացում չունեին եկեղեցու մասին, երբևէ Պատարագ չէին լսել: Այդպիսի մի քաղաք էր Ռետոդ գետի ափին գտնվող Բելցի քաղաքը, որտեղ ապրող հայերը եկեղեցի չունեին: Տեղի արժանավոր այրերը մի քանի անգամ փորձեր են արել եկեղեցի կառուցելու, բայց դրան չունենալու պատճառով նրանց երազանքը մնացել է անկատար: 1901 թ. Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի հայոց վիճակային կոնսիստորիայի թեմակալ առաջնորդ Ներսես արքեպիսկոպոսը օգնություն ստանալու ակնկալիքով դիմում է Սամկո-Պետերբուրգի հայոց եկեղեցական խորհրդին, մի բարեպաշտ հիմնարկի, որը բազմաթիվ անգամներ էր օգնության ձեռք մեկնել դիմող բոլոր կազմակերպություններին և անհատ անձանց, բայց այդ ընթացքում խորհուրդը ի վիճակի չէր օգնություն ցույց տալու, և Բելցիի եկեղեցու կառուցման մասին երկար ժամանակ չխոսվեց:

Տարիներ են անցնում: Բելցիում հայ եկեղեցի կառուցելու կարիքը գնալով ավելի է զգացվում: 1908 թ. սկզբին քաղաքում մահանում է Մարիա Փոքշանյանը՝ թողնելով մի կտակ, ըստ որի Բելցի քաղաքի իրեն պատկանող մի հողամասը, այն է՝ Բուլվարնի և Խոստինակու փողոցների անկյունում գտնվող հատվածը տրամադրում է առաջնորդարանին՝ հայկական եկեղեցի կառուցելու նպատակով՝ պայմանով մի-

այն, որ եթե հինգ տարում եկեղեցի չկառուցվի, ապա փոխարենը կառուցվի հայկա-
կան դպրոց:

Հիշյալ հարցով, Ներսես արքեպիսկոպոսի առաջարկով, 1909 թ. հուլիսի 5-ին
Բեյցիում ընտրվում է կոմիտե, որը պետք է զբաղվեր եկեղեցու կառուցման հար-
ցով: Նույն օրը տեղի է ունենում ժողով, ուր Ջատիկյան քահանան կարդում է Ներ-
սես արքեպիսկոպոսի հեռագիրն այն մասին, որ Սարկակի գավառի կալվածատեր,
այդ ժամանակ Քիշնի վերաբնակիչ Մկրտիչ Հովհաննեսի Լուսախանյանը ինքնա-
հոծար կամքով դիմում է Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի հայոց թեմի առաջ-
նորդին, ցանկություն հայտնում Բեյցի քաղաքում դամբարան և եկեղեցի կառուցե-
լու՝ հանգուցյալ եղբոր և ծնողների հիշատակը հավերժացնելու համար: Լուսա-
խանյանը եկեղեցու կառուցման համար նվիրում է 20000 ուրլի: Թեմի առաջնորդ
Ներսես արքեպիսկոպոսը այս խնդրանքով դիմում է կաթողիկոսին՝ թույլատրելու
դամբարան և եկեղեցի կառուցելու՝ հանգուցյալների աճյունը դամբարան տեղափո-
խելու պայմանով: Կոնրակով կաթողիկոսը տալիս է թույլություն: Որոշվում է
գարնանը սկսել աշխատանքները: Դիմում են նաև կայսրին՝ եկեղեցու կառուցման
թույլտվությունը ստանալու: Ծոռով Բեսարաբիայի ներքին գործերի նախարարու-
թյան հոգևոր գործերի ղեկարտամենսը սինոդին տեղեկացնում է, որ կայսրը բա-
րեհաճել է թույլատրել Բեյցիի հայոց եկեղեցու կառուցումը: Հաստատվում է
պլանը, ուղարկվում սինոդ, ստեղծվում է եկեղեցու կառուցման հանձնաժողով, որի
նախագահ է ընտրվում Հակոբ Գրիգորի Հաջի-Մարգարյանը:

Լուսախանյանի տրամադրած 20000 ուրլին բնականաբար բավարար չէր եկե-
ղեցու կառուցման համար, ուստի քաղաքացիների խնդրանքով Ներսես արքեպիս-
կոպոսը դիմում է Սանկտ-Պետերբուրգի հայոց եկեղեցիների խորհրդին՝ եկեղեցու
կառուցման համար 20000 ուրլի նպաստ ստանալու, նաև խնդրում խորհրդի հոգա-
բարձությանը՝ նպաստելու երկու տարվա ընթացքում եկեղեցին կառուցելու: Կար
նաև հանգանակությունից ստացված 8500 ուրլի, օգնության ձեռք էին մեկնել նաև
անհատ մարդիկ՝ ավագ և այլ շինարարական նյութեր տրամադրելով:

Բեյցիի հայ հասարակությունը անհամբերությամբ էր սպասում եկեղեցու կա-
ռուցմանը, քանի որ հայ համայնքը զրկված էր հոգևոր մխիթարությունից:

Վերջապես գալիս է բաղձալի ժամը: 1910 թ. օգոստոսի 24-ին դրվում է եկեղեցու
հիմքը, և սկսվում են շինարարական աշխատանքները: Ծիսության գործի մասնա-
ժողովի նախագահ Հաջի-Մարգարյանի եռանդուն ջանքերի շնորհիվ հաջողվում է
երկու տարվա ընթացքում կանգնեցնել եկեղեցին: Բեյցիի հայ կամայնքի հոգևոր
պակասությունը լրացվում է. 1912 թ. հոկտեմբերի 28-ին ավարտվում է եկեղեցու
կառուցման արխատանքները, օծվում է և կոչվում գանուն սրբոյ հօրն մերոյ Գրի-
գոր Լուսատրչի»:

Նոր նախիջևանի և Բեսարաբիայի հայոց վիճակի թեմակալ առաջնորդ Գևորգ
Կաթողիկոսին ուղղած նամակում այն միտքն է արտահայտում, թե Լուսախանյանը,
սիրահոծար կատարելով նվիրական պարտքը, հայցում է կաթողիկոսի օրհնության

կոնդակը՝ «հորդորելով ապագայում ևս նույն հոգին ու սիրտն ունենալ հայ համայնքի բազմակարոտ պետքերի նկատմամբ»:

Կաթողիկոսի օրհնության կոնդակին արժանի էին երկու այրերն էլ հավասարապես: Եկեղեցու շինության ամբողջ հոգալը և կառուցման բազմազան խնդիրները ցանկալի վախճանի հասցրած լինելու իրողությունը՝ մեկն իբրև նյութական օժանդակության հիմք, մյուսը՝ բարոյական: Ի դեպ Հաջի-Մարգարյանը եկեղեցու կառուցման համար իր անձնական լուման է ներդնում՝ տալով 4000 ռուբլի: Եկեղեցու կառուցմանը մեծապես նպաստում են նաև Բելցիի քաղաքային վարչության նախագահ Հակոբ Գրիգորյանը:

1912 թ. դեկտեմբերի 12-ին Գևորգ Ե Կաթողիկոսը օրհնության կոնդակ է հղում Բելցիի հայոց եկեղեցու կառուցմանը նպաստող արժանավոր այրերին՝ Մկրտիչ Լուսախանյանին և Հակոբ Հաջի-Մարգարյանին:

ՋՈՒԼԻԵՏԱ ՀՈՎՀԱՆԵՒՍՅԱՆ